ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԵՒ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

---

27 Մարտ 1965
Թ. 214

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Ամենապատիւ
Տ. Եղիշէ Արքեպիսկոպոս Տէրտէրեանին,
Սրբազան Պատրիարքին Հայոց Երուսաղէմի,

Ս. Երուսաղէմ.

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»։

Այս տարի Մեծ Եղեռնի յիշատակի տարի, սուգի և աղօթքի տարի։

Բայց այսօր նաեւ Սուրբ Զատիկ և մեծ աւետիս Փրկչի յարութեան։

Ինչքան մխիթարական է հայոց սրտերուն համար, տօնել Զատիկը, տօնել յիշատակը Տիրոջ յարութեան և յաղթութիւնը ընդդէմ մահուան, ոգեկոչելով յիշատակը մեր նահատակաց, ողջունելով վերածնունդը հայ ժողովուրդին ու Հայոց Մայր Երկրին։

Գուցէ աւելի քան երբէք մեր հոգիները հաւատքով ու ցնծութեամբ գեղուն, կ'օրհնեն ու կ'երգեն փառքը Քրիստոսի հրաշափառ յարութեան, ու նաեւ փառքը նոր կեանքի կոչուած հայ ժողովուրդին։

Այս աւետիսներով, սիրելի Սրբազան Եղբայր կը շնորհաւորենք զՁեզ և Սուրբ Էջմիածնէն կը յղենք աստուածային օրհնութիւն Ձերդ Սրբազնութեան և Տիրախնամ Աթոռիդ գինուորեալ միաբանութեան և եկեղեցական-ազգային կազմակերպութեանց, և համայն Մեր հաւատացեալ զաւակներուն, մաղթելով բոլորիդ անսպառ եռանդ, շինարար ոգի, սիրով· միութիւն, աշխատանքի երկար տարիներ խաղաղ, պտղառատ, ի փառս մեր ազգին և մեր Եկեղեցիին։

Շնորհք և սէր յարուցեալ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ այժմ և յաւիտեան ամէն։

Եղբայրական սիրոյ ողջունիւ՝

ՎԱԶԳԷՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

digitised by A.R.A.R.@